



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Մ Ա Ր Դ ՈՒ Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն**

0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

« _____ » _____ 2016թ.

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Հովհաննիսյան,

Ձեր՝ սույն թվականի մարտի 22-ի թիվ 01/19.1/3142-16 գրությանն ի պատասխան՝ Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1304-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները և դիտողությունները:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում մեծամասամբ կապահովվի համապատասխանություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման՝ ներպետական օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով սահմանված պահանջների միջև: Այդ կերպ նշված իրավակարգավորումն իրավական բնույթի որակական նոր հիմքերի վրա կդնի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման պետության կողմից տարվող քաղաքականությունը:

Համամիտ լինելով ներկայացված նախագծերի հեղինակների նպատակադրմանը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ չնայած նախագծերով տրված լուծումներին՝ գտնում ենք, որ դրանցում տրված որոշակի ձևակերպումներ խնդրահարույց են: Այսպես.

1. ա. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի **«պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատել է պատժի կրման վայրում»** ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ դրան բավարարելու համար դատապարտյալը պարտադիր կերպով պետք է աշխատած լինի **հենց պատժի կրման վայրում**: Մինչդեռ, ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը դատապարտյալներին հնարավորություն է ընձեռում **աշխատել նաև ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս** (տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 79-րդ հոդված, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը

հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 109-րդ և 110-րդ կետեր):

բ. Նախագիծը սահմանում է երկու հանգամանք, որոնք չպետք է հիմք հանդիսանան պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու համար: Դրանք են՝ 1. պատիժը կատարող մարմնում աշխատելու հնարավորության բացակայությունը, 2. առողջական խնդիրներից ելնելով դատապարտյալի չաշխատելը:

Առաջին կետի կապակցությամբ նշենք, որ գործնականում հնարավոր է այնպիսի դրություն, երբ պատիժը կատարող մարմնում լինի աշխատելու հնարավորություն, սակայն դատապարտյալը գործող օրենսդրական սահմանափակումների պատճառով չներգրավվի համապատասխան աշխատանքներում: Այսպես օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտավորությամբ կատարված հանցագործության համար **յոթ փարուց ավելի ժամկետով** ազատագրկման դատապարտված անձը չի կարող ներգրավվել տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում: Նշվածի կապակցությամբ կարծում ենք, որ նախագծով սահմանված հանգամանքներից բացի՝ անհրաժեշտ է նախատեսել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից բացառություն:

Անդրադառնալով նախագծով սահմանված երկրորդ հանգամանքին՝ այն է՝ առողջական խնդիրներից ելնելով դատապարտյալի չաշխատելուն, ապա տվյալ պարագայում, կարծում ենք, անհրաժեշտ է սահմանել, թե առողջական ինչպիսի խնդիրների դեպքում է այն կիրառելի: Կարծում ենք, որ գործնականում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար տվյալ հարցի վերաբերյալ անհրաժեշտ է ՀՀ քրեակատարողական օրենսդրությունում համապատասխան կարգավորումներ նախատեսել: Պատահական չէ, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալին չվարձատրվող աշխատանքների ներգրավելն արգելվում է:

2. ա. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված չէ դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկ ընդունվելուց հետո պայմանական վաղաժամկետ ազատելու համար սահմանված նվազագույն ժամկետի, ինչպես նաև նախագծով սահմանված բոլոր չափանիշների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում ստանալու հնարավորություն: Մինչդեռ, կարծում ենք, որ դատապարտյալը պետք է օժտված լինի այդպիսի իրավունքով: Նման դիրքորոշումը համահունչ է նաև Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ Rec(2003) 22 հանձնարարականի 5-րդ կետին, որի համաձայն՝ պատիժը կրելու սկզբից և եթե ազատությունից զրկված անձինք պետք է տեղեկացվեն պատժի համար սահմանված նվազագույն ժամկետին (որը սահմանված է պատժի որոշակի ժամկետը և (կամ) պատժի որոշակի մասը կրելու պահանջի ձևով), որը կրելուց հետո կարող են ազատ արձակվել, ինչպես նաև այն, թե ինչ չափորոշիչներ են կիրառվելու (...):

բ. Կարծում ենք, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելիս դատապարտյալը, Նախագծով նախատեսված իրավունքներից բացի, պետք է իրավունք ունենա նաև *նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանալ պատշաճ ծանուցում, իր խնդրանքով ծանոթանալ իր վերաբերյալ Անկախ հանձնաժողով ներկայացված նյութերին և անվճար ստանալ դրանց պատճենները, հայտնել բացարկներ և այլն:* Այսպիսի մոտեցումը

բխում է վերը նշված հանձնարարականի 32-րդ կետից, որի «գ» ենթակետով սահմանվում է, որ դատապարտյալները պետք է իրենց գործի նյութերին ծանոթանալու պատշաճ հնարավորություն ունենան, իսկ «դ» ենթակետով՝ որոշումներում պետք է նշվեն դրա հիմքում ընկած պատճառները, և դրանք պետք է գրավոր ձևով ծանուցվեն:

գ. Նախագծով առաջարկվում է Անկախ հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ: Այս տեսակետից տեղին է նշել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ծառայությունն իր կարևոր դերակատարումն ունի դատապարտյալի ուղղման և վերաինտեգրման հարցում, ուստի, արդարացված է Անկախ հանձնաժողովի կազմում Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ ընդգրկված լինելու հանգամանքը: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկումների ընթացքում պարբերաբար հանդիպել են կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների, ովքեր «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ հոգևոր-կրոնական գործունեություն են իրականացրել (...) ազատազրկման վայրերում (...)՝ այնտեղ գտնվող և տվյալ կրոնական կազմակերպության անդամ հանդիսացող քաղաքացիների խնդրանքով (...): Հետևաբար, նպատակահարմար կլինի կրոնական այդ կազմակերպությունների ներկայացուցիչներին նույնպես նման հնարավորություն ընձեռել:

Վերոգրյալից բացի, կարծում ենք, որ ճիշտ կլինի նախագծում տրված «Հայ առաքելական եկեղեցու» բառերը փոխարինել «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու» բառերով, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով տրված է հենց այդպիսի ձևակերպում: Այս դեպքում կպահպանվի նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, ըստ որի՝ իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձանոթ հասկացություններ կամ տերմիններ:

3. Կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությունների ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա կարգավորել նաև քրեական դատավարության ոլորտին առնչվող մի շարք դրույթներ: Բանն այն է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգը կարգավորվում է ոչ միայն վերը նշված իրավական ակտերով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածով: Այս տեսակետից անհրաժեշտ ենք համարում լրացումներ մտցնել նշված իրավական ակտում և նախատեսել դատական նիստերին տուժողի կամ նրա ներկայացուցչի (տուժողի իրավահաջորդի) մասնակցության հնարավորություն, ինչպես նաև սահմանել նրա իրավունքներն ու պարտականությունները: Գտնում ենք, որ 1) *տուժողը պետք է իրավունք ունենա կարծիք հայտնել դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի վերաբերյալ*, 2) *պատշաճ ծանուցվի դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին*, 3) *իր, ինչպես նաև իր ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի կյանքին, առողջությանը և իրավաչափ շահերին սպառնացող վտանգի դեպքում հայցել հատուկ պաշտպանություն*, 4) *տալ բացատրություններ*, 5) *տրամադրել նյութեր*, 6) *հայտնել բացարկներ*, 7) *ծանոթանալ դատարան ներկայացված նյութերին, անվճար ստանալ դրանց պատճենները* և այլն:

Այսպիսի դիրքորոշումը հիմնվում է ոչ միայն միջազգային փաստաթղթերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ՀՀ վճռաբեկ դատարանի,

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի որոշումների վրա, այլ նաև արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի վրա:

Այսպես, Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հոչակագրի (ընդունվել է 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով) 4-րդ կետում սահմանվել է, որ **զոհերը՝ ազգային օրենսդրության համապատասխան պեղք է ունենան արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն:**

Նույն հոչակագրի 6-րդ կետը **պարտավորեցնում է աջակցել զոհերին, որպեսզի դատական (...) ընթացակարգերը մեծամասամբ համապատասխանեն նրանց պահանջմունքներին՝** հետևյալ միջոցներով.

ա) զոհերին **տեղեկություն տալ** իրենց դերի և **դատական քննարկումների անցկացման ժամկետի, ծավալի և ընթացքի**, նրանց գործերի քննության արդյունքների մասին, հատկապես ծանր հանցագործությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ նրանք այդպիսի տեղեկություն են պահանջել,

բ) այն դեպքերում, երբ **շոշափվում են զոհերի անձնական շահերը, դատաքննության համապատասխան փուլերում ապահովել նրանց կարծիքի (...) ներկայացումն ու քննարկումը (...):**

Տուժողի իրավունքների վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է արտացոլվել նաև Եվրոպայի նախարարների Կոմիտեի 1985 թվականի № R(85) 11 «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» հանձնարարականում, որը կոչ է անում պետություններին մեծ ուշադրություն հատկացնել տուժողի կարիքներին քրեական դատավարության բոլոր փուլերում, **վերանայել գործող օրենսդրության և պրակտիկայի կիրառումը՝ հաշվի առնելով տուժողի շահերն ու պահանջները** (տե՛ս նախաբան, կետ 13):

«Հանցագործությունից տուժած անձանց տրամադրվող աջակցության վերաբերյալ» Rec (2006) 8 հանձնարարականի համաձայն՝ քրեական արդարադատության մարմինները, տուժողի կարիքներից ելնելով, **պեղք է երաշխավորեն տուժողին տեղեկատվության մատչելիությունը**, որն անհրաժեշտ է քրեական դատավարության տարբեր փուլերում իր իրավունքների իրացման և շահերի պաշտպանության համար (տե՛ս 4.2 կետ):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին, նշել է, որ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական (...) կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք»: **Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի 45-րդ կետի համաձայն՝ «(...) անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: 8-րդ հոդվածի ներքո Պետությունները կրում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն

¹ Հոչակագրի 1-ին կետով «զոհեր» տերմինի տակ հասկացվում են անձինք, որոնց անհատապես կամ կոլեկտիվ կերպով անդամ պետությունների գործող ազգային քրեական օրենքների, ներառյալ իշխանության հանցավոր չարաշահումն արգելող օրենքների խախտմանը հանգեցնող գործողության կամ գործողության բացակայության հետևանքով վնաս է հասցվել, ներառյալ մարմնական վնասվածքները, բարոյական և նյութական վնասները, հոգեկան տանջանքները կամ նրանց հիմնարար իրավունքների էական կրճատումը:

մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ»:

Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (***inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր***) ...» (տե՛ս Տիգրան Քամայանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵՇԴ/0097/01/09 որոշման 23-րդ կետը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված գործով իրավական դիրքորոշումը քննարկվող հարցի վրա տարածելով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քրեադատավարության օրենսդրությամբ նախատեսված պայմանական վաղաժամկետ ազատման կանոնակարգման պայմաններում (երբ դատական նիստին տուժողը հնարավորություն չունի մասնակցել և արտահայտել իր դիրքորոշումը) ***տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:***

Նշված հարցը բազմիցս քննարկման առարկա է դարձրել նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը և նշել, որ տուժողը, որպես անձ, ում հանցագործությամբ պատճառվել է մարմնական, գույքային, բարոյական կամ գործարար համբավի վնաս, ունի քրեական դատավարությունում իր սեփական շահերը, որոնք չպետք է հանգեն բացառապես փոխհատուցում ստանալուն: Այդ իսկ պատճառով տուժողը պետք է իրավունք ունենա մասնակցել դատական նիստին քրեական դատավարության բոլոր փուլերում, ինչպես նաև հնարավորություն ունենա գործի վերաբերյալ իր դիրքորոշումը հասցնել դատարանին և պաշտպանել իր իրավունքները և օրինական շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով (տե՛ս *постановления Конституционного Суда Российской Федерации от 15 января 1999 года N 1-П, от 14 февраля 2000 года N 2-П, от 16 октября 2012 года N 22-П и др.; определения Конституционного Суда Российской Федерации от 5 декабря 2003 года N 446-О, от 24 ноября 2005 года N 431-О, от 11 июля 2006 года N 300-О, от 17 ноября 2011 года N 1555-О-О*):

Այս առնչությամբ օրինակելի է Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 2.1-րդ մասի կարգավորումը, որը հնարավորություն է ընձեռնում տուժողին մասնակցել դատական նիստին ինչպես անձամբ (կամ օրինական ներկայացուցչի միջոցով), այնպես էլ տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

Հարգանքով՝



Ա. ԹԱԹՈՅԱՆ